

սուլտանին գայ գրաւէ քաղաքը : Ամիրան իսկոյն հայ երեւելիներու խըն-  
գիրն հաղորդեց սուլտանին , եւ հրահանգ ստացաւ երթալ գրաւել Սիսը :

Փետրվարի 24-ին ամիրան 15,000 զօրքով եկաւ միացաւ Արուբէքրի  
բանակին :

Այս լուրն առնելով Լեւոն՝ զիշեր ժամանակ պարպեց քաղաքը , եւ  
ժողովուրդը տարաւ պատսպարեց միջնաբերդին մէջ . ետքէն ալ՝ թշնամիին  
ձեռքը բա՛ն մը չձգելու համար՝ կրակի տուաւ քաղաքին անպաշտպանելի  
մասը :

Յաջորդ օրը միացեալ բանակը յարձակում գործեց միջնաբերդին վրայ :  
Կոխը տեւեց մինչեւ իրիկունս : Որովհետեւ միջնաբերդն անառիկ էր , թըշ-  
նամիին կողմէն շատ մարդ ջարդուեցաւ , բայց Լեւոն ալ վիրաւորուեցաւ  
ծնօտէն :

Ներքին թշնամիները նկատելով որ Լեւոն որոշած է բնաւ անձնաւ-  
տուր չըլլալ , մանաւանդ որ գիտէին թէ Լեւոն եւ իրենները հանդիսաւոր  
երգում ըրած են մինչեւ իրենց յետին շունչը զիմադրելու , թաղաւորին  
կեանքին գէժ գաւազրութիւն մը պատրաստեցին(1) :

Դաւազրութիւնը պատրաստուելէն ետքը Մատթէոս՝ ուրիշ ընկերներու  
օգնութեամբ՝ յարձակեցաւ Լեւոնի ամրացած աշտարակին վրայ (24 ժարտ),  
հայ թիկնապահներն սպանեց , եւ մտաւ Լեւոնի խուցը : Լեւոն իր ծնօտի  
վէրքէն պառկած էր ներսը . բայց երբ հաւատարիմ թիկնապահներէն իմա-  
ցաւ գրսի աղմուկին պատճառն ու իր գրան վրայ կատարուած տապարի  
հարուածներուն նպատակը , անմիջապէս պարանի մը միջոցով վար սահեցաւ  
ու փախաւ աշտարակէն : Իրեն հետեւեցան հաւատարիմ թիկնապահները ,  
թուով երեք , որոնց երկուքը հայ էին , իսկ միւսը յոյն : Սակայն թագու-  
հին եւ զաւակները ժամանակ չունեցան փախելու . վասն զի Շապու եւ  
ընկերները գուռը կոտրած եւ ներս խուժած էին արդէն :

Այս վիճակը թէեւ երկար չտեւեց , եւ Լեւոն վերստին ձեռք ան-  
ցուց աշտարակը , բայց արտաքին եւ ներքին թշնամիներու զիմադրելու  
կացութեան մէջ չէր այլ եւս . իր վիրաւոր վիճակը , յոգնութիւնը , քնա-

(1) Անուոս դիսաւորեալ ամբաստնութիւն մըն է, որ Դարդիլ (եր. 130)  
կարողիկայն անունն ալ կը խառնէ այս դուսադուքեան գործին մէջ , անուա-  
նարկելու համար Հայոց հոգեւոր պէտք . բայց ճիշտ կրնայ ըլլալ որ պարոն Վա-  
սիլ , Մասթեոս դը Շապու ու իր կիներ (Կոստանդին Դ-ի արին) մասնակցած  
ըլլան . այս վերջիններուն դեմ առարկութիւն մը չունին :